

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղական ինտելիգենցիա.
Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Նոր-Բայազէ-
տից Նամակ Շուշուց. Նամակ Բաթումից. Նամակ
Արդանանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Անգլիայից և Կին-ճանապարհորդի տեղեկու-
թիւնները. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—
ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ՖԵԼԻՏՏՈՆ.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Այն գիւղերում, ուր դեռ ևս հիմնված չէ
ձխական—կիւղեցական ուսումնարան և կամ բա-
ցակալ է նոյնպէս կանոնադրութեամբ, այդպիսի
գիւղերում գտնված ինտելիգենցիան բաղկացած է՝
գիւղական քահանաներից, տերացւաններից, գրա-
դիր-խալիֆաներից և քանի մի գրագետ մարդ-
կանցից, որոնք իւր մի քանի հոգի է լինում
միայն և հինգ այդ անշան կօտորնգնան է, որ
կապում է, եթէ կարելի է այսպէս ասել, գիւ-
ղական ինտելիգենցիան:

Սակայն եթէ համեմատելով իրենց այդ ինտե-
լիգենցիան իր համագիւղացի միւս հասարակ
ժողովրդի հետ, այն ժամանակ համարեա թէ
շատ քիչ զանազանութիւն կը գտնենք թէ նրանց
մտաւոր զարգացման տեսակետից և թէ կենսի
առանձնայատկութիւնների ու այլ և այլ հանգ-
մանքների վերաբերմամբ: Կենսի ուղիսը պայ-
մաններում, որպիսի հանգամանքներում գտնվում
է գիւղական հասարակ ժողովուրդը, նոյն պայ-
մաններում գտնվում է և գիւղական ինտելիգեն-
ցիան և այն սովորութիւնը, այն բնաւորութիւնը
և խոսակցութիւնն ևս եղանակը, որ ունի այդ գիւղ-
նը, մի և նոյն կէտերը տիրապետում են և իր հա-
րեան հասարակ ժողովրդի—ուսմիկ ամբողջ մէջ...
Նայում էք այդ երկու որոշ դասակարգերին (գիւ-
ղական ինտելիգենցիային և հասարակ ամբողջին)
և ոչ մի աչքի ընկնող զանազանութիւն, ոչ մի
ապարքութիւն չէք տեսնում նրանց շրջանում:—
Մի և նոյն դրութեան մէջ է այդ երկու որոշ
դասակարգերի ապրուստը, մի և նոյն են նրանց
նիստ ու կացը, կեր ու խումը, վարք ու բարքը,
պարագայները (օրինակ երկրագործութիւնը) և

ՖԵԼԻՏՏՈՆ

ՇՊԷ. Թիֆլիսը չորս ժամանակ.—Զիւրը, հա-
ւերը, Գուսպի նիւտերը և մեր ընկերութիւննե-
րի ժողովները.—ՇՊԷ. Կոջորում.—ՇՊԷ. Վաղար-
շապատում և Պետրոս Սիմօնեանցի փառաբանում.—
Նոր հիւանդութիւն և Սիմօնեանցի դէպքի շրջի
երկար.—ՇՊԷ. ամենքի վրա ազդում է, բացի Ա-
ւետիկ Արաքսեանցից.—Նրա յօդուածները.—
Մի քանի մարդկանց ուղեղն ֆինէ և ներկայացնում:—
ՇՊԷ. ազդեցութիւնը «Արձագանքի» պատկեր-
ների վրա.—Նիթէ այդպէս շարունակվի, քիչ պա-
կերներ կը տպվեն շարաւիթներով.—Գրիչս
այլ ևս չէ գրում:

ՇՊԷ է, չոր... Այն աստիճան չոր է, որ Թիֆլի-
սի փողոցներում երթևեկող ձիաբաշ կերկրուկ
ձիերը ընկնում և ստախում են: Բակերում հա-
ւեր են ստախտում: Տաքութիւնը արեգակի տակ,
Բոմբիկի ջրմաշակով, 47 աստիճանի է հա-
տում...
Եւ չեմ զարմանայ եթէ շուտով Թիֆլիսի բոլոր
ընկերները կը սկսեն շրջել փողոցներում վայրե-
նիւնքի պէս տկուր, բաղադրակրթութեան մի նշան
միայն պահելով ձեռքերին, այն է արեւակալը և
Այն աստիճան չոր է, որ Թիֆլիսի Գուսպի
նիստերը չեն կայանում, իսկ հայոց թատրոնական
ընկերութեան ժողովը թէ և կայացաւ, բայց ոչինչ
հետևանքի չը հասաւ: Այն աստիճան չոր է, որ
հնար չը կայ ոչ թատրոնական ընկերութեան, ոչ

վերջապէս մի և նոյնն է նրանց ընտանեկան կա-
ռավարութեան թէ ներքին և թէ արտաքին կադ-
մակերպութիւնը:

Ինչպիսիք են ուրեմն զանազանութիւն գիւղական ին-
տելիգենցիան միւս հասարակ ժողովրդից: Այդ
հարցին զոնէ այս պատասխանը կարելի է տալ.
—Նրանով, որ զբանցից առաջինը գիտէ միայն
կարգաւ, գրիչ բռնել և եկեղեցում երգել, որի
«ալեւուրի» օրհներգի սուր ելեւջներով եղանակ-
վող զիւ ձայնը բարձրանալով դէպքի գիւղական
եկեղեցու կամարները՝ սկսում է պոռթկալ, զո-
ղանջել և ապա խուլ ներզաշնակցութեամբ զարկ-
վել արթնող ուսմիկ ամբողջի ականջին...
Ասեցինք, որ գիւղական այդ ինտելիգենցիա հա-
մարվողները կարգում են էլ և նրանց ընկերացա-
նութեան գրքերը՝ քիչ բացառութեամբ՝ ժամա-
գրքը, սաղմոս, աւետարան, հին և նոր կտակա-
րան և այլ այսպիսի կրօնական գրքեր են, որոնք
տասնեակ տարիներով և զուգէ նոյն իսկ դարեւ-
րով պահպանվել են ամենայն խնամքով, իբրեւ
պապական ժառանգութիւն... Իսկ նոր լոյս տես-
նող ժողովրդական գրքեր, լրագիրներ և այլ պար-
բերական հրատարակութիւններ, գիտէք, նրանք
չեն կարգում (անշան բացառութիւն կարող է
լինել), որովհետեւ մտաւոր աւելի թաքմ և աւելի
գիւրդաւորելի ճաշակ տուող այլ և այլ բովանդա-
կութեամբ նոր լոյս ընծայվող ժողովրդական
գրքերի երես տեսնելը չէ վիճակվում գիւղական
ինտելիգենցիային: Իսկ պարբերական հրատարա-
կութիւնները՝ լրագիրներ ձեռք բերելը կամ կար-
գալը՝ նա երազել անգամ չէ կարող...
Բացի դրանցից գիւղական ինտելիգենցիան,
ինչպէս վերև յիշեցի, գրում էլ է: Բայց ինչ է
գրում կամ ինչ գիտէ գրել.—պարտաւորակ և
բարեաղիք և աւելի ոչինչ... այն էլ բարեաղիքը
գրում է, Աստուած հեռու պահի, այնպէս, որ
համ ամբողջապէս լի է լինում խոշոր սխալնե-
րով, համ էլ շատ մարդ չէ կարողանում կար-
գալ...
Այդ դրութեան մէջ է գտնվում զոնէ Ծաղ-
կածորի շրջանի գիւղական ինտելիգենցիան:

Այդ այդպէս լինելուց յետոյ՝ ինչ կարելի է
սպասել գիւղական ողորմելի ինտելիգենցիայից,
այդ լեռնոյ, անգնական և մտաւորապէս աղքատ
դասակարգից, որը ծնվել է գիւղում, ապրել—
մեծացել է գիւղում և մի և նոյն ժամանակ
կրթվել և դաստիարակվել է իր նախորդ գիւղա-

կան տիրացուի և գրագիր-խալիֆայի մօտ, ո-
րոնց մտաւոր զարգացման շրջանն այն չափը,
այն ընդարձակութիւնն է ունեցել, որը այժմ ու-
նեն նրանց յաջորդները...
Գ. Ս.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

Յուլիսի 1-ին

Յունիսի 20-ին ճանապարհ ընկաւ դէպքի Պրա-
տիգորսկու հանրային ջրերը մեր տաղանդաւոր
և միակ բանաստեղծը՝ Բաֆայէ Պատկանան:
Նրանք, որոնք տեսել են բանաստեղծին մի կամ
երկու տարի առաջ, անշուշտ կարող չեն էլ երե-
ւակայել, որչափ փոխված է նա. նիհար երեսը,
խորոք աչքերը, դժուար շունչը, հազը—այդ ամե-
նը միասին դարձնում է նրան անճանաչելի: Հի-
ւանդը, յոյնած աշխարհի ամենօրեայ կուրի-
քով, թողված համարեա բոլորից, յուսահատ,
նա զնայ թշվառ, թողնելով այստեղ մեծ գեր-
դաստան, նիւթական ամենակարօտ վիճակի մէջ,
որից երբեք ազատ եղած չէր նա, որ երգել է
ուրիշների ցաւերն ու վշտերը, իր ցաւերն ու
վշտերը թաղցնելով ժողովրդի նախանձոտ ու
համար աչքերից: Անշուշտ այդ նեղ դրութեան
մէջ, միշտ տանջվելով, նա հաղիւ թէ կառույցա-
նայ: Անշուշտ մեծ կը լսենք շատ ցաւակցական,
եղուկաւոր խօսքեր, բայց օգնութիւն... երբ
ուշ կը լինի արդէն: Գնա մուրի, արի սիրեմ...
Ազամանի, Բաֆայի և շատ ուրիշների օրի-
նակները՝ ահա ապացոյցներ, որոնց առջև պէտք
է լռել:

Կար ժամանակ, մտադրել էին կատարելու մեր
բանաստեղծի 35-ամեայ յօբելանսը. երկու հա-
րուստ քաղաքներ՝ Թիֆլիս և Նոր-Նախիջևան ոտ-
քի ելան, բաւական խօսքեր և մէկը միւսին նա-
յելով ոչինչ չարին ու բանաստեղծին անապահով
մնաց: Այն ինչ բանաստեղծի դաւանները մեծա-
ցան, աւելի անգուղի կարօտ են բարձր վարժարան-
ներ մտնել՝ անգործիկ համար: Հասան գրկանք,
հաւածանք: Բայց Բաֆայէլը հպարտ էր և երբեք
և ոչ մի գանգատ չէր լսվում նրանից: Ափսոս
հիւանդութիւնը տապալեց նրան, արտուց, միայ-
նակութիւն տրեց նրա հոգուն, և ահա նա ճա-
նապարհ ընկաւ դէպքի Տաղ-Շուր...
Արդեք ժամանակ չէ, մտաւորաւ մեր առաջ-
վայ սովորութիւնը՝ մեռելի ետեքի գնալով, վախ-

խեղճ անմեղ հրեշտակը հիւանդ է և եկել է այս-
տեղ միմիայն բժշկանից խորհուրդ հարցնելու.
նպատակով... Ուրեմն նա այստեղից շուտով պի-
տի գնալ... Ասում են, որ բժիշկները որոշել են
արդէն նրա հիւանդութեան ինչ լինելը. այդ հի-
ւանդութիւնը շատ վտանգաւոր է և անուանվում
է mania ecclesiastica. Բժիշկներն անտարակոյս
խորհուրդ կը տան սուրբ մարդուն ջրերը գնալ,
իսկ այս րօպէիս վերոյիշեալ հիւանդութեան վրա
ամենավերաբար ներգործութիւն ունեցող ջրերը,
—Բաֆայի ջրերն են: Ամեն մարդուն, ի հարկէ,
ներելի է որոնել փրկութիւն որտեղ որ հնարա-
ւոր է. եթէ հիւանդի համար փրկութիւն չը կայ
մեր կողմերի ջրերում, ի հարկէ, շատ լաւ է ա-
նում, որ գնում է Բաֆայի ջրերում բժշկվելու:
Նրա պէս հիւանդի համար փրկութիւնը միայն
այնտեղ է:

ՇՊԷ է չոր... Ամենքի վրա չորը այսպէս թէ
այնպէս ներգործում, ազդում է, իր աւելի կամ
պակաս կորստաբեր հետեւանքներն է ունենում:
Միակ մարդը, որի վրա ոչ չորն է ազդում, ոչ էլ
ցորտը.—դա Աւետիկ Արաքսեանցին է: Նա
միշտ նոյն և անփոփոխ է մնում: Ամառ թէ ձմեռ,
—նա միշտ միանգրկ ձեռք յօդուածներ է գը-
րում... Կը գրի մի երկար յօդուած, այս էլ, այն
էլ կասէ յօդուածի մէջ, կերկարացնէ նրան այն
աստիճան, որ ուսումնական հետազոտութեան
կերպարանք ստանայ յօդուածը, մարդը յօդուածը

վախ կանչել և պատկերով մեռել զարգարելը,
փոքր ինչ հոգ տանենք այն մարդու մասին, որի
անունը հպարտութեամբ կարտասանենք բոլոր
հպերս և որը եթէ մի ուրիշ երկրի և ուրիշ ազ-
գի դաւակ լինէր.—նրա զրուածները հարստու-
թիւն կը տային նրան:

Գր. Չալ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՍԱՋԵՏԻՑ

Յունիսի 25-ին

Մի քանի օր սրանից առաջ, թէ տեղիս և թէ
գաւառի հողագործ դասակարգը հրճվում էր ան-
սահման ուրախութեամբ և բերկրաւ ծաղկա-
նրա դէմքի վրայից չէր հեռանում այն պատճա-
ռով, որ նրա ցանած հացահատիկները, անդադար
ուռցվելով անձրեւի յորդառատ և զոհարարաբ-
կաթիլներով, այս տարի անթիւ առատութիւն և
առատ հունձ էին խոստանում, որով խեղճ հողա-
գործը այնուհետ համարձակ կադատվէր վաշխա-
ռունքի պարտքի ծանր թիւց և աւելի հեշտու-
թեամբ կը վճարէր արդեւական հարկը, որոնք մի
քանի տարվայ ընթացքում սաստիկ ծանրանալով
նրա պարանոցի վրա, սպիպել էին նրան այս
տարի գրաւ դնել իր հետ հողագործական լուծը
կրող մի զոյգ եղները, որպէս զի ցորեն և գարի
դնել կարողանայ դառն քրտինքով հերկած փա-
փուկ հողը ցանելու, և իր բաղաժամադ ընտա-
նիքը սովից պաշտպանելու... Բայց ահա այսօր
ձեռքերը քարացած կուրծքին դրած՝ դառն հեկե-
կանքներով մորմորում է, տեսնելով իր բոլոր
ջանքը և ապագայ յոյսերն ի դերեւ ելած, նրա
համար, որ ամսին 18-ից սկսած մինչև 24-ը,
խրաբանչիւր օր, շարունակ երկու ժամ՝ երկնքից
տեղաց սաստիկ կարկուտ և արմատախիլ անելով
ոչնչացրեց բոլոր հացաբոյսերը: Իսկ այնուհետեւ
այդ կարկուտից դուրսացած հեղեղը, թէ քաղաքիս
և թէ շրջակայ քաղաքանք, Քոստամադը, Ղախա,
Նորադուղ և Ղուլայի գիւղերի մէջ, կատաղաբար
հոսում էր, փլատակ անելով անթիւ չիւղութիւն-
ներ և խեղդելով հարկւրաւոր մանր և խոշոր ա-
նասուններ, որոնք երեկոյեան վերադառնում էին
արածելուց դէպքի տուն: Ամսին 23-ին կարկու-
տից առաջացած անգուղի հեղեղը զոհ տարաւ և
չորս մարդիկ Քոստամադը գիւղից, լափելով
նրանց հսկողութեան յանձնած արտամարդերում
արածող անասունների մեծ մասը: Դեռ մինչև

կարդալիս ասում է «վատ չէ»... Յանկարծ նոյն
յօդուածի մէջ կը մտցնի այնպիսի մի պարբերու-
թիւն, որը կը փչացնէ, կալանադէտ ամբողջ յօ-
դուածի իմաստը...

Նա, օրինակ, գրում է մի յօդուած Սուխու-
կեանցի վերջին պիէսայի առիթով՝ ապահարգանի
հարցի մասին... Ոչինչ, լաւ է, սկզբից լոգիկա-
կան է երևում, նոյն իսկ համարական դէպքի
ապահարգանի զաղափարը... Բայց յանկարծ,
ինչպէս ուսանողն ասում են НИ КЪ СЕДУ, НИ КЪ
ГОРОДУ, արձակում է հետեւալ ֆրազա, որը ան-
հունաշունտ է ամբողջ յօդուածի արմատաշու-
կան հետեւողութիւնը. «Ըստ իս, ապահարգան
ցանկացողները՝ ազատ սէր ցանկացողներն են...»
Вотъ тебѣ и на!

Նոյն արեւ է պարոնը նորերում և կաթո-
ղիկական տեղակալ իրաւունքների առիթով
իր գրած յօդուածում: Նա ըստ երկրորդին համա-
ձայն է «Մշակի» բոլոր մտքերի հետ, համաձայն
է, որ տեղական ունի այն բոլոր իրաւունքները,
ինչ իրաւունքներ վայելում է և կաթողիկոսը,
բայց զուտ կրօնական իրաւունքներից. և յան-
կարծ, ինչպէս դերմանացիք ասում են, «mir
nichts, dir nichts» արձակում է մի անտեղի նա-
խադասութիւն, որը ոչինչ կապ չունի ամբողջ
յօդուածի իմաստի հետ. «Նա կարող եմ խօսքս
շատ կարճ կտրել և յայտնել, որ մեծ չափազան-
ցութիւն է կարծել թէ տեղակալը չափազանց
չօժված և կամ ժամանակաւոր կաթողիկոս է:

այսինքն իւրաքանչիւր տանտէր, արտասուել թափելով արօտատեղից չէ վերադարձած, իր անասուններին և նրանց պահապան հովիւներին է օրհնում կարկուտի ահագին կոտորելի և հեղեղից տեղ տեղ գլղված աւազները մէջ, և չէ կարողանում գտնել: Բարեբաղդաբար այս հեղեղը միշտ պատահում էր ցերեկով, իսկ եթէ գիշերով լինէր, այն ժամանակ աւելի մեծ վնաս կը տար: Աւերջապէս համառօտելով այս անցքը մանրամասնութեան նկարագրելը, միայն այս կասկեղ որ շարունակ երկու օր կարկուտի կոտորելը, այս ամառնային տաք եղանակին, և այն էլ յունիս ամսում, մնացել էին դեռնի վրա առանց հաշիւու: Սրանից ընթերցողը կարող է հասկանալ կարկուտի քանակութիւնը և նրա պատճառած վնասը, որը միայն Նոր-Բայազէտում մօտաւորապէս 25.000 բուբուռ է հասնում:

Շրեթեհ մարդիկ, զարմանալով այսպիսի յանկարծակի պատահած հեղեղի վրա, ասում են թէ այս տեսակ բան նրանք իրանց կեանքում չէին տեսել մինչև այժմ: Թէև մեր կողմերում խոցման հողաբոլորը մշտապէս աշխատում է արկաշանութեամբ իւրաքանչիւր տարի, բայց չէ կարողանում դուրս գալ իր աղքատ դրութիւնից, որովհետև կարկուտը, խորշակը և այլն վնասում են նրա ճակատի քրտինքով ցանած արտերին, և եթէ իւրաքանչիւր չորս կամ հինգ տարուց յետոյ աշրոյում է նրան ստանալ հողագործութիւնից բաւարար շահ, այն էլ վաշխառուների ձեռքն է անցնում:

Մ. Վ.

ՆԱՍՏԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 24-ին

Ամիս 9-ին կայացաւ տեղիս անդային հողերը դարձնող տարեկան ակտը: Ընդարձակ դահլիճում բաւական մարդ կար հաւաքված: Այդ առաջին անգամն է, որ մեր թեմական դպրանոցի ակումբ այդքան մարդ է ներկայ դասուում: Սա նշան է, որ շուշուցներին սկսել է հետաքրքրել դպրանոցը, և այդ էլ չնորձով հողաբարձութեան: Եւստանք, որ հասարակութիւնը այսուհետև կը ակնի աւելի և աւելի հետաքրքրվել դպրանոցով: Հանդէսը բացեց Ավագանի և Կալիստոսը: Նախ տեսուէ՛ պ. Ե. Մադաթեան կարգաց դպրանոցի 1890/91 տարեկան ուսումնական հաշիւը, որից և որակաց, թէ դպրոցը այդ տարին ունեցել է մօտ 300 աշակերտ, որոնցից 70 հոգի ձեր և եղել սովորում: Յիշվեց մի երևոյթ, որը պատել չէ բերում շուշուցներին և որը ամեն տարի կրկնվում է, այն, որ դպրանոցում ամենից շատ աշակերտներ լինում են պատմաստականներում, իսկ դասարաններում աշակերտներ թիւը զգալի կերպով պակասում է: Այդ երևոյթը բացատրվում է նրանով, որ մեր փոքր ի շատե ունեւոր ծնողները իրանց դասակներին տալով այդ դպրոցը, մի երկու տարուց յետոյ, երբ արդէն իրանց որդիք մի քիչ զրել կարգաւ են սովորել, հանում են նրանց և տալիս ուրիշ դպրոցներ, աւելորդ հա-

և մեծ սխալ է աշխատել մի այդպիսի կարծիք տարածել և ընդհանրացնել:

Բայց ինչի... հարցրեք պ. Արասխանեանցին: Նա ինքն ի կարողանայ ձեռն պատասխանել... Այնպէս...

Ինքն իր յօդուածում դեռ բոլոր կաթողիկոսական իրաւունքները տեղակալին յատկացրել, պրծել է,— և յետոյ ասում է թէ սխալ և վնասալար միտք է կարծել թէ տեղակալը ժամանակաւոր կաթողիկոս է:

Ապա ինչ է նշանակում ժամանակաւոր... *

Գիտե՛ք, ընթերցող, Արասխանեանց ինչ տեսակ մարդկանցիցն է: Նա այն մարդկանցիցն է, որոնք թէ գիմնադրւում և թէ համալսարանում ընդունել, իրացրել են բազմաթիւ հմտութիւններ, բայց այդ բոլոր հմտութիւնները մնացին ուղիղում միմեանցից անկապ, չեն մարտկել, չեն ձուլվել մի ամբողջ ամբողջութեան մէջ, այլ մնացել են ջոկ ջոկ, իրար մէջ չը յարակցելով... Այդ տեսակ ինտելիգենտների ուղեղը (որոնք, խօսելով Արասխանեանցի ընդունում և կազմում են մեր ինտելիգենցիայի վերջին ֆորմացիան) ներկայացնում է մեզ հետեւալ պատկերը: Նրանց ուղեղը ուրիշ բան չէ, եթէ ոչ մի ամբողջ, մի պահեստ, որը բաժանված է փոքրիկ, փոքրիկ սենեակների կամ խոցերի և այդ իւրաքանչիւր փոքրիկ բաժանմունքի մէջ կայ մի մի հմտութիւն, մի մի

մարդկային այդ դպրոցում թողնել: Այդպիսով դպրանոցում մնում են միայն նրանք, որոնք միջոց չունեն մտնել ուրիշ դպրոցներ: Դպրոցը մինչև այժմ չէ ունեցել ֆիզիկական կարելիւթ, որ, ի հարկէ, անհրաժեշտ է բնագիտական աւարկանների դաստաւութեան համար: Հողաբարձութիւնը շուտով պիտի ստանայ ֆիզիկական կարելիւթ, դպրանոցի սուղ միջոցներով: Դպրանոցի շինութիւնը շատ պակասութիւններ ունի, բայց հողաբարձութիւնը միջոց չունի լրացնել այդ պակասութիւնները: Եւստոյ կարգացվեց դպրանոցի անասնապահ կարճաւուն հաշիւը: Ընդարձակ հաշիւը հողաբարձութիւնը պիտի իր ժամանակին տալադէ, ինչպէս անցեալ տարին Այնուհետև աւարտողներին վիշախաններ տրվեցան: Այս տարի աւարտել են 7 հոգի. այս երկրորդ տարին է, որ մեր թեմական դպրանոցի վեցերորդ դասարանից վիշախան է տրվում, որովհետև երկու տարի է, ինչ որ դպրութիւն ունի վեցերորդ դասարանը:

Դպրանոցի տեսուէ՛ պ. Ե. Մադաթեան հրաժարվում է տեսչի պաշտօնից: Ուրեմն հողաբարձութիւնը նոր տեսուէ պիտի հրաւիրէ. բայց հողաբարձութիւնը թող աշխատէ հրաւիրել մի փորձված և հմուտ անձ:

Այս տարի քննութիւն տուին միայն 3-որդ պատմաստականի և 6-որդ դասարանի աշակերտները (բայց աւարկաններից), իսկ մնացած դասարանների համար տարվայ ընթացքում կօմիսիաներ են եղել, ինչպէս պետական միջնակարգ դպրոցներում: Գննութիւն եղել է և այն դասարաններում, ուր մի օր է և աւարկայ մերջացել է. քննութիւնը եղել է այդ աւարկաններից: Այսուհետև պիտի միշտ այդպէս լինի: Յանկալի կը լինել, եթէ մեր միւս թեմական դպրանոցներն էլ հետևելին Շուշու թեմական դպրոցի օրինակին, որով աշակերտներին աղատած կը լինէին շաբաթներով և ամիսներով իրանց ջղերն ու ուղեղը զրգուկուց:

Ամիս 23-ին էլ կայացաւ մեր օրիորդաց դպրոցի տարեկան ակտը: Նախ կարգացվեց դպրոցի տարեկան ուսումնական հաշիւը, ապա տեսնական հաշիւը, այնուհետև աւարտող աշակերտներին հմտութիւններ տրվեց: Բայց որովհետև մնաց ոչինչ չը լսեցինք, այդ պատճառով էլ ոչինչ չեմք կարող ստել այդ ակտի մասին: Փոքրիկ դահլիճը լիքն էր միայն կանանցով, այնպէս որ աղամարդիկ կանգնել էին դահլիճի հարեան սեղաններում: Այդ էր պատճառը, որ աղամարդիկ, բայց մի տաս հոգուց, որոնք հանդիսի սկսվելուց երկու ժամ առաջ եկել էին դպրոցը և դահլիճի դռները մօտ ապստում էին հանդիսի սկսվելուն, ոչինչ չը լսեցին: Չը գիտեմք, թէ ինչ է մտածել դպրոցի վարչութիւնը: Նա գիտէր, որ անշուշտ մեծ բազմութիւն պիտի հաւաքվի դպրոցը, ինչպէս ամեն տարի (մասնաւոր որ շատ մարդկանց հրաւիրել էր), թէև ներկայ գտնուողների մի չնչին մասն է հետաքրքրվում դպրոցի դրութեամբ, մնացածները գալիս են միայն թամաշա անելու, ուստի պէտք էր, որ հանդէսը

մասաւա... մէկի մէջ կայ աղիւս, միւսում կիր, երրորդում՝ տախտակ, չորրորդում՝ գերան, հինգերորդում՝ ապակի,—բայց այդ բոլոր մասաւէքը այնպէս էլ մնում են փակված պահեստի բաժաններում և մինչև իր կեանքի վերջը այդ տեսակ պահեստի տէրը չէ կարողանում աշուղեցնել տան կառուցումը...

Այդ տեսակ մարդիկ թէ գիմնադրւելից և թէ համալսարանից չեն դուրս բերում վերջացած, ամբողջ հմտութիւններ, որոշ սխալում, ընդհանուր դարգացում,—այլ կտոր կտոր մտքեր, կամ հմտութիւններ, որոնք և մնում են դարձված ուղեղի փոքրիկ բաժաններում, ջոկ ջոկ միմեանցից, առանց իրար մէջ յարակցելու, առանց մի ամբողջ, ամբողջ շնորհալի շինութիւն կառուցանելու...

Այդ է պատճառը, որ այդ տեսակ մարդիկ որոշ ուղղութիւն, որոշ կատարելատիւ, որոշ իդէալ, աւարտված գաղափար, կազմակերպված profession de foi երբեք չունեն և չեն կարող ունենալ, քանի որ ընդհանուր մտաւոր դարգացում չունեն, այլ նրանց ուղեղը կտոր կտոր, միմեանցից անկապ, միմեանց հետ չը յարակցող տեղի կօմիսիաների պահարան է...

Շուք է չոր... Այն աստիճան չոր է, որ Արծաղանքի էջերի վրա սպիտակ կանանց պատկեր

կայանար մի ուրիշ տեղ, օրինակ թեմական դպրանոցի դահլիճում, կամ թէ յայտարարէր, որ հանդիսին կարող են ներկայ գտնվել միայն կանայք: Թէ չէ ինչ կը նշանակէ հասարակութիւնը բերել դպրոցը և ժամերով կանանցեցնել, առանց միջոց տալու, որ նա մի բան լսէ:

Մտնելը, որը սպառնում էր մինչև անգամ սով դիւլ մեր կողմերում, անսպասելի կերպով ինքն իրան փչացաւ, յայտնի չէ թէ ինչից: Ժողովուրդը մի չնչին մասն է կոտորել միայն: Այդպիսով այլ և մոբիլից վախ չը կայ, և այս տարի պէտք է որ առաւ ինչն ինչ մեր կողմերում: Շատ տեղերում հիմնալի արտեր կան:

Կամ տակաւի երես չեմք տեսնում, կամ թէ եթէ տեսնում էլ ենք, շատ տարօրինակ է լինում կազմված և ոչինչ նշանակութիւն չէ ունենում: Օրինակ, մայիս ամսին տակաւայում միւս 9 կօպ էր նշանակված, փոխանակ 6 կամ 7 կօպէկի: Բայց մասվաճառները միւս ծախում էին 8 կօպէկով, որովհետև 8 կօպէկով էլ ծախելը շատ ձեռնաւոր էր իրանց համար: Այդպիսով դրանք կարմիրքիւն մեր քաղաքի վարչներին... իսկ այս ամիս համար մեր կողմս չը կայ, երեւի տեսնում են, որ իրանց որչա՛ած տակաւն ոչինչ նշանակութիւն չունի, այդ պատճառով էլ տակաւն չեն նշանակում...

ՆԱՍՏԱԿ ԲՍՈՒՄԻՑ

Յունիսի 3-ին

Արտասահմանից ստացվող տախտակի վրա յուլիսի 1-ից պուլին 6 կօպ (սով) մաքս դրվեց: Հասկանալու համար, թէ որքան մեծ նշանակութիւն ունի այդ մաքսը տեղական նաւթային արդիւնաբերութեան համար, պէտք է ի նկատի ունենանք, որ դէպի Ասիա և Եւրօպայի միջանի կողմերը տարվող ամբողջ կերօսիւնը ուղարկվում է այստեղից բացառապէս տախտակապատ թիթիկեղայ արդիւններով: Եւ այդ տախտակ միլիոնաւոր պուլներով ստացվում է մեծ մասամբ Գալիլիայից և Եւրօպայի դանապան տեղերից, մասամբ միայն Ռուսաստանից: Տախտակի վրա մաքս դնել տալով, ուստ արդիւնաբերողները ցանկացան երեւի այդպիսով արտասահմանից տախտակի ներմուծվելուն առաջն առնել, և իրանց տախտակի աւաւորեն առաջ տանել: Փորձը ցոյց կը տայ, որ այդ սխալ է, որովհետև գործարանատիրոջը, թէև նա 6 կօպէկ պուլին մաքս էլ վճարէր, այնուամենայնիւ ձեռնաւոր է արտասահմանի տախտակ գործածելը, քան թէ Ռուսաստանի տախտակները, քանի որ այդ վերջիններից այնքան էլ լաւ չեն և բայց այդ քանակութեան կողմից են գծուար թէ Բաթումի ամենօրեայ պահանջներին բաւականութիւն տալ կարողանան: Հետեւեմք այդ մաքսի կը լինի այն, որ նաւթային արդիւնաբերութիւնը մի ծախսով էլ աւելի կը ծանրաբեւեւի: Եթէ հաշիւ առնելու լինեմք, որ մաքսը վճարվում է նոր ստացված, դեռ ևս թաց տախտակի համար, որ ստացվելուց առաջ բաւա-

նեղ յունիս ամսից սկսած կանայց կամայ տկորվում էին. սկզբից միայն դ է կօպէկ լին երկու հայ հասարակութեան առջեւ, ապա փոքր աւ փոքր զգեստները հանում էին և վերջապէս այդ շաբաթներին № 16-ի «Վշտացած յաւերժահար» կատարելապէս տկորվեց ու այդպէս ներկայացաւ շաբաթներին բաժանորդներին աչքերին...

Սակայն ինքզն ինքն էլ է ամաչում (երեւի աւելի ամբողջ ունի, քան տնօրէնն ու խմբագիրը): Եւ իրաւ, ինչպէս վշտացած չը լինի... Պ.պ. Արգար Յովհաննիսեան և Զարոյ նրան բոլորովին տկորացրել են ու այսպէս հասարակութեան մէջ դուրս բերել... Զաւերժահարը տաւան և իննսրորդ դարում, առանց զգեստների, երբ նրա ժամանակակից բոլորի ամենամեծ գաղափարներն է դուրս գլխի... Խեղճը ամաչում է ու լաց լինելով՝ ձեռքերով ծածկում է դէմքը... Միջոցաւ նրա քոյրերը վերջին մօղային համիմատ՝ ամաւովայ սիրուն ու նախշուն զգեստներ են պատուիրում մաղամ Տօլէի, մաղամ Ելովիէի և մաղամ Օվրի մօտ,—Արծաղանքի յաւերժահարը՝ դեղեկի բնութեան մէջ, (գուցէ և ամբարանցում) դատապարտված է անգութ տնօրէնի և անգութ խմբագրի հրամանով՝ դուրս մնալ որ և էլ զգեստից և նրա արդիւնները մեր ներկայումս «Արծաղանքի» բազմաթիւ ընթերցողներին... Ինչ դարմանաւոր բան կայ, որ իր կին տեղով խեղճը

կան չորանում և թիթեանում է, երբ ի նկատի ունենանք, որ տախտակի ահագին քանակութիւնը մնում է անգործածելի, որպէս կտորներ, կը յայտնվի, որ իւրաքանչիւր արկղի վրա ծախ է աւելանում 3—4 կօպէկ, այսինքն երկու կօպէկ կերօսիւն իւրաքանչիւր պուլին: Դա շատ ծանր է մանաւանդ այնպիսի մի ժամանակ, երբ ամեն կերպ աշխատում ենք արտասահմանի միջոցներն է ժամանցնել ամերկական նաւթի հետ կերպ մրցելու համար:

Մաքսային տարիքը յուլիսի 1-ից բոլորովին փոխվել է. դանապան ապրանքների համար մաքսերը աւելացել են և նոր մաքսեր են դրվել Գրանց մասին մի ուրիշ անգամ:

Ա. Այ.

ՆԱՍՏԱԿ ԱՐԴԱՆԻՑ

Յունիսի 16-ին

Վերջին ուսումնական պատերազմից յետոյ ուսաց իշխանութեան տակ ընկած քաղաքները մի քանիսը հսկայական քայքայու առաջնացին, իսկ մի քանիսը մնացին իրանց նախնական դրութեան մէջ: Առաջին կարգին կարելի է դասել և Արդահանը, բայց, տարաբաղդաբար, Արդահանը իր արած առաջադիմական քայլերի հետ, առաջադիմել է և վատ յատկութիւններ մէջ:

Արդահանը իսկապէս մի դաղթալայ է. այս տեղ պատահում է՝ անայցիացուն, կարսեցուն, արդուիցուն, անաղաղաբուն և այլն, որոնք ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն են հաստատած և պարագայում են վաճառականութեամբ, կամ արհեստներով: Այստեղ կայ մի և կեղեցի, մի ուսումնարան, մի քահանայ, մի ուսուցիչ, մի փոքրիկ թատրոնական անշուք բեմ, որի վրա երբեմնապէս տալիս են ներկայացումներ: Ունենք սիրողներ մի խումբ երկու կուտակցութեան բաժանված, ունենք հաստատած Բարեգործական ընկերութեան ճիւղ և վերջապէս ունենք երկուստարգութիւն: Այդ երկուստարգութիւնը բաժանում ենք երկու դասաւարդի՝ ծառայողական և վաճառականական, որոնց մէջ հաշւում ենք և արհեստաւորներին:

Որպէս հայեր, որպէս սիրահար կուտակցութիւններ՝ Արդահանի երկուստարգութիւնը համեմատել չէ պարում, ամեն տեղ և ամեն գործում յայտնի է լինում մեր «եսը», որը շատ անգամ փոխադարձ յարաբերութիւններին տալիս է թը: Նախկան ձեւ Այդ դեռ բաւական չէ. այստեղ երկուստարգութիւնը, որի նպատակն է միմեանի վայելել, ոչ միայն չունի իր մէջ համեմատութիւն, ոչ միայն երեւմ խանդալդ է լինում դասաւոր գործերի աշուղներին, այլ այդ երկուստարգութիւնը իր ամբողջ կեանքը անց է կացնում զինտներում: Փոքրիկ Արդահանում կարելի է համարել 9—10 օղեսներ, որոնք միմիայն իրաւասարդները տեսնում են միմեանց հետ ժամանակ անցկացնում: Այդ իր տեսակում ամենալատ սովորութեան հիմքը դրված է ծառայողական պատկերները:

Վշտացած կը լինի... Կին լինի, ու միջոցաւ այդուցիւ... Եւ ինչ բարբարոսութիւն, համ իրանք վշտացրել են ինքզին, համ էլ իրանք տակը ստոր գրել են «Յաւերժահար» վիշտը:

Եթէ չգրեք այդպէս crescendo շարունակվի, անաւան է, որ ոչ թէ միայն կանայք, բայց և տղամարդիկ էլ ստիպված կը լինեն կատարելապէս տկորվել և «Արծաղանքի» հետեւալ համարները էջերի վրա հետոհատել կերեան և տկոր պարտները պատկերներ: Նախ, ի հարկէ կը տեսնենք իրան խմբագրի և իրան տնօրէնի՝ Արդար Յովհաննիսեանի և Զարոյի տկոր կերտաւորները, ապա Եւստիգուշեանի և իշխան Կոստանի Բէհրութեանի կատարելապէս մտկացած պատկերները:

Եւ ամեն մէկի տակ ստորագրված կը լինի «Վշտացած Յովհաննիսեան», «Զարոյ» (վշտացած) «Վշտացած Գեորգ Եւստիգուշեան», «Իշխան Կոստան»:

Շուք է չոր... Այնքան չոր է, որ քրտինքը թափվում է ջրի պէս ճակատից, ձեռքը այլ ևս չէ չարվում, զրիչս հրաժարում է զրկուց... Ստիպված են վերջ դնել ֆիլիտոսին...

ԱՍՈՒՑԻ

